

## Արտաքին մարտահրավերները և հնարավորությունները. հայացք Արցախից

Միբելի հայրենակիցներ, գործընկերներ,

Շատ լուրջ պատասխանատվություն է, միաժամանակ նաև պատվաբեր է առաջինը ելույթ ունենալ արտաքին քաղաքականությանը նվիրված այս նիստին և ներկայացնել Արցախի տեսակետները առկա արտաքին մարտահրավերների և հնարավորությունների վերաբերյալ: Մեր պատմության ողջ ընթացքում մենք տեսել ենք բազմաթիվ փորձություններ, դիմակայել բազում մարտահրավերների, այսօր էլ, ժամանակակից աշխարհում գրեթե յուրաքանչյուր պահ ստիպված ենք գործ ունենալ նորանոր մարտահրավերների հետ: Որպես մեր առջև ծառայած հիմնական մարտահրավեր՝ մենք դիտարկում ենք ադրբեջանա-ղարաբադյան հակամարտությունը: Բազմիցս վերահաստատել ենք մեր անկոտրում համոզմունքը, որ այն հնարավոր է կարգավորել բացառապես խաղաղ բանակցությունների միջոցով, միջազգային իրավունքի, հիմնարար սկզբունքների, նախ և առաջ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հիման վրա: Հակամարտության կարգավորումը թույլ կտա ոչ միայն ապահովել հայկական երկու պետությունների խաղաղ և անվտանգ զարգացումը, այլև զգալիորեն կբարելավի անվտանգության մթնոլորտը ողջ տարածաշրջանում և հնարավորություն կստեղծի տարածաշրջանի բոլոր պետությունների և ժողովուրդների համար լիարժեքորեն իրացնելու իրենց ողջ ներուժը: Ցավոք, չնայած հայկական երկու պետությունների բոլոր ջանքերին, որոնք իրենց օժանդակությունն են ստանում նաև միջազգային հանրության՝ մասնավորապես հակամարտության կարգավորմամբ զբաղվող միջնորդների կողմից, Ադրբեջանը շարունակ փորձում է հիմնահարցը լուծել օգուտ իրեն՝ չխորշելով ռազմական ճանապարհից: Իր բոլոր քայլերով, հատկապես 2016 թվականի ապրիլյան ագրեսիային հաջորդած ժամանակաշրջանում, Ադրբեջանը մեծացնում է լարվածությունը հակամարտության գոտում, տապալում ցանկացած խաղաղարար նախաձեռնություն, հետևողական քայլեր ձեռնարկում ուղիված Արցախի մեկուսացմանը, իր հասարակության մեջ տարածում է այլատյացություն և ռազմամոլություն, դրանով իսկ խորացնելով անվստահությունը հակամարտող կողմերի միջև և վտանգելով ադրբեջանա-ղարաբադյան հակամարտության վերջնական կարգավորման ողջ գործընթացը: Ադրբեջանը սանձազերծել է սպառազինությունների իսկական մրցավազք, ինչը մտահոգիչ հանգամանք է ոչ միայն հայկական երկու պետությունների, այլև տարածաշրջանի անվտանգության տեսանկյունից: Ստեղծված պայմաններում մենք հարկադրված ենք առավել մեծ ուշադրություն դարձնել մեր պաշտպանական համակարգի և բանակի կատարելագործմանն ու արդիականացմանը՝ որպես տարածաշրջանում Ադրբեջանի ռազմատենչ նկրտումների զսպման և կայունության ապահովման հիմնական գործոններ: Գոհունակությամբ կցանկանայի նշել, որ այս

ուղղությամբ ձեռնարկված և ձեռնարկվող քայլերն արդեն իսկ թույլ են տվել զգալիորեն բարելավել իրավիճակը և սաստել ալիսյան վարչակազմի ռազմատենչ նկրտումները: Իրավիճակը սրելու և հայկական կողմերի ու միջազգային հանրության հետ ուժի սպառնալիքի լեզվով խոսելու փորձերին զուգահեռ, Ադրբեջանը հետևողական աշխատանք է տանում ադրբեջանա-դարաբադյան հակամարտության էությունը աղավաղելու և այդ աղավաղված պատկերը միջազգային հանրությանը հրամցնելու ուղղությամբ: Այսպես, պաշտոնական Բաքուն շարունակաբար փորձում է կրոնական երանգ հաղորդել ադրբեջանա-դարաբադյան հակամարտությանը: Տակավին օրերս Աստանայում կայացած իսլամական համագործակցության, կազմակերպության, գիտության և տեխնոլոգիաների հարցերով գագաթաժողովի ժամանակ Իլհամ Ալիևը կրկին Հայաստանին մեղադրեց իսլամաֆոբիայի մեջ և կոչ արեց մահմեդական երկրներին որևէ հարաբերություն չունենալ նրա հետ: Մահմեդական երկրների աջակցությունն ապահովելու նպատակով իսլամական գործոնի չարաշահումը հատկապես մտահոգիչ է հարևան միջերկրական և մերձավորարևելյան տարածաշրջաններին տեղի ունեցող աշխարհաքաղաքական իրադարձությունների համատեքստում, որոնք իրենց անմիջական արձագանքն են ունենում նաև մեր տարածաշրջանում: Բաքվի իսլամական ահաբեկիչների հետ համագործակցության արմատները գնում են 90-ականների սկիզբ, երբ 1991-94 թթ. ադրբեջանական զորքի շարքերում մեր դեմ կռվում էին ահաբեկչական խմբավորումների հետ կապված վարձկաններ: Նույնիսկ 1994թ. մայիսին զինադադար հաստատելուց հետո, Ադրբեջանի ու իսլամական ահաբեկիչների միջև համագործակցությունը ոչ միայն չդադարեց, այլև թևակոխեց նոր փուլ, երբ Ադրբեջանը դարձավ տարանցիկ գոտի՝ զենքի ապօրինի մատակարարումների և ահաբեկիչների աջակցության համար: Ըստ բազմաթիվ աղբյուրների, այդ թվում նաև ադրբեջանական, այսօր ԴԱԵՇ իսլամական պետության շարքերում կռվում են մեծ թվով ադրբեջանցի գրոհայիններ: Ըստ նույն աղբյուրների Իսլամական պետությունը նավթ է մատակարարում սև շուկա՝ ադրբեջանական գործարարներին պատկանող նավերի միջոցով, իսկ Ադրբեջանը ապօրինի կերպով զենք է հասցրել Սիրիայում կռվող ահաբեկիչներին: Բաքվի սիրախաղը իսլամական ծայրահեղ շրջանակների հետ՝ կրոնական գործոնը որպես արտաքին քաղաքական գործիքակազմի անբաժան մաս օգտագործելու համար փորձերը հաշվի առնելով, ստեղծված ներքին սոցիալական իրավիճակից ադրբեջանական հասարակության մեջ աճող դժգոհությունը պարարտ հող են ստեղծում իսլամական ծայրահեղականության՝ ոչ միայն դեպի Ադրբեջան, այլ նաև տարածաշրջան ներթափանցման համար: Նման երևույթը կարծում եմ մարտահրավեր է ոչ միայն մեզ՝ հայերիս համար, այլև խաղաղ և կայուն հարավակովկասյան տարածաշրջանի տեսլականով առաջնորդվող բոլոր, այդ թվում նաև մահմեդական երկրների համար:

Մինչդեռ մենք համոզված ենք, որ ադրբեջանա-ղարաբադյան հակամարտությունը ոչ կրոնական և ոչ էլ տարածքային վեճ է: Այն նախ և առաջ երկու տարբեր քաղաքակարթական մոտեցումների, վարքագծերի բախում է՝ արցախյան, հիմա՝ հայկական, որը հենվում է միջազգային հանրության մեծամասնության կողմից յուրացված, որդեգրված այնպիսի ժամանակակից արժեքների վրա, ինչպիսիք են՝ առաջին հերթին ժողովրդավարությունն ու մարդու իրավունքների պաշտպանության նկատմամբ հարգանքը, և ադրբեջանական, որն իր ժառանգաբար փոխանցվող ամբողջատիրական իշխանական համակարգով մարդու իրավունքների նկատմամբ բացահայտ քամահրանքով, խոսքի ազատության և այլախոհության ցանկացած դրսևորման նկատմամբ շարունակական հետապնդումներով, ուժի կիրառման սպառնալիքի վրա հիմնված արտաքին քաղաքականությամբ ուղղակի ընդօրինակում է վաղ միջնադարի բռնակալությունները: Ավելին, Ադրբեջանն այսօր փորձում է իր այդ բարքերը պարտադրել նաև այլ երկրներին՝ նրանց հարկադրելով գործել իր իսկ սեփական կանոններով: Այդ նպատակով Ադրբեջանի իշխանությունները դիմում են բոլոր հնարավոր միջոցների և հնարքների՝ ընդհուպ մինչև տարբեր երկրների քաղաքական գործիչների և պաշտոնյաների կաշառելը:

#### Հարգելի գործընկերներ

Մենք համոզված ենք, որ նույնիսկ այսպիսի մարտահրավերների առկայության դեպքում ի գորու ենք հասնել ադրբեջանա-ղարաբադյան հակամարտության խաղաղ և վերջնական կարգավորմանը առանց վտանգելու մեր ժողովրդի ապահովությունն ու անվտանգությունը և ազատության մեջ ապրելու՝ արյան գնով ձեռք բերված իրավունքը: Ադրբեջանա-ղարաբադյան հակամարտության կարգավորման հիմք պետք է հանդիսանա Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացումը և դրա արդյունքների ճանաչումը: Միջազգային հանրության համար այդ գաղափարը ըմբռնելի է և ընդունելի, սակայն Ադրբեջանը ոչ միայն հրաժարվում է ճանաչել մեր ինքնորոշման իրավունքը, այլ ժխտում է մեր ապրելու իսկ իրավունքը: Դրա վառ ապացույցը դարձավ 2016թ.-ի ադրբեջանական ագրեսիան, որի նպատակը ցանկացած գնով, նույնիսկ՝ արցախցիների բնաջնջման ճանապարհով Արցախին տիրանալն էր:

Օգտվելով այս առիթից, կցանկանայի նաև հատուկ շնորհակալություն հայտնել աշխարհասփյուռ հայության բոլոր ներկայացուցիչներին, որոնք ապրիլյան այդ օրերին համախմբված կանգնեցին մեր կողքին: Մենք զգում էինք և շարունակում ենք զգալ նրանց մասնակցությունն ու աջակցությունը:

Ապրիլյան պատերազմը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության հովանու ներքո իրականացվող բանակցային գործընթացին վերջին տարիներին հասցված ամենալուրջ հարվածներից մեկն էր, որն ընդհանրապես կասկածի տակ դրեց խաղաղ

կարգավորման գործընթացի հեռանկարները: Այսօր առաջնային խնդիր է հանդիսանում լիարժեք բանակցությունների վերականգնման համար պայմանների ձևավորումը: Նախ և առաջ անհրաժեշտ է լիովին ապահովել 1994-95թթ.-ի անժամկետ եռակողմ համաձայնագրերով հաստատված զինադադարի ռեժիմը: Այդ առումով կարևոր ենք համարում ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենյակի ընդլայնմամբ և միջադեպերի հետաքննության մեխանիզմների մշակման վերաբերյալ 2016 թ.-ի Վիեննայի ու Սանկտ Պետերբուրգի գազաթափողովներում ձեռք բերված պայմանավորվածությունների անհապաղ իրագործումը: Համանախագահողների կողմից բազմիցս հնչեցված այդ քայլերի իրականացմանը լիովին աջակցում է հայկական կողմը, սակայն այդ պայմանավորվածությունները մինչև օրս չեն իրականացվել, քանի որ Ադրբեյջանը հավատարիմ մնալով պայմանավորվածությունները դրժելու իր քաղաքականությանը, հրաժարվում է գործուն քայլեր ձեռնարկել այդ ուղղությամբ: Ի տարբերություն Ադրբեյջանի՝ Արցախում հակամարտության խաղաղ լուծման այլընտրանք չեն տեսնում: Արցախի Հանրապետությունը շարունակում է ներդնել բոլոր ջանքերը տևական խաղաղություն և կայունություն հաստատելու նպատակով, սակայն այդ գործընթացը չի կարող միակողմանի լինել: Մենք պատրաստ ենք քննարկելու հարցերի ողջ համալիրը, բայց կարգավորման ընդհանուր համատեքստում, քանի որ դրանք անբակտելիորեն կապված են միմյանց:

Մեր սկզբունքային դիրքորոշումն է՝ կարգավորումը պետք է հիմնված լինի խաղաղության, իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի հարգման վրա: Հակամարտության վերջնական կարգավորման համար անհրաժեշտ է կենտրոնացնել բոլոր ջանքերը՝ մշակելու համապատասխան մեխանիզմներ և պայմաններ երկու անկախ պետությունների՝ Արցախի հանրապետության և Ադրբեյջանի հանրապետության խաղաղ գոյակցման համար:

Համոզված ենք, որ Արցախի հանրապետության միջազգային ճանաչումը կապահովի նաև խաղաղ գործընթացի անշրջելիությունը և պաշտոնական Բաքվի համար ուժի և ուժի սպառնալիքի կիրառման քաղաքականության անթույլատրելիության հստակ ազդանշան կդառնա:

Միբելի բարեկամներ,

անկախ մեր առջև ծառայած մարտահրավերներից՝ Արցախի հանրապետությունը չի շեղվելու իր ընտրված ուղղուց և շարունակելու է պայքարը միջազգային հանրության կողմից իր անկախությունը ճանաչելու ուղղությամբ: Մենք անցանք բոլոր հնարավոր ճգնաժամերի միջով, բայց մեր հանձնառությունը դեռևս 1991թ.-ին ընտրված ճանապարհին, գաղափարներին և նպատակներին մնաց անփոփոխ:

Անկախության 26 տարիներին Արցախի ամենակարևոր ձեռքբերումն իհարկե այն է, որ չնայած բոլոր դժվարություններին և փորձություններին մենք միասնական ջանքերի շնորհիվ կարողացանք կառուցել և զարգացնել ազատության, ինքնիշխանության և ժողովրդավարության գաղափարների վրա խարսխված պետականություն՝ զարգացող տնտեսությամբ և հզոր ու մարտունակ բանակով, որն ի գորու է պաշտպանելու աշխարհի տարբեր ծայրերում ապրող հայերի բնօրրան Հայաստան աշխարհի անքակտելի մաս Արցախը: Անցած տարիները ցուցադրեցին ոչ միայն արցախյան պետականության կենսունակությունը, այլ նաև ամենաբարդ իրավիճակներում խնդիրներ լուծելու նրա ունակությունը: Արցախը ապացուցել է, որ հուսալի գործընկեր և տարածաշրջանում կարևոր աշխարհաքաղաքական գործոն է հանդիսանում՝ ապահովելով կայունություն և խաղաղություն: Չնայած Ադրբեջանի՝ Արցախը մեկուսացնելուն ուղղված ջանքերին և Արցախի՝ միջազգային հանրության կողմից չնաճաչված լինելու փաստին, Արցախը շարունակում է առաջընթացի այլընտրանքային ուղիներ փնտրել և հաջողություններ գրանցել, թե ճանաչման և թե տարբեր երկրների հետ համագործակցության հաստատման ու տնտեսական զարգացման բնագավառում: Նույնիսկ ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության չկարգավորվածության պայմաններում մեզ հաջողվում է ապահովել մեր երկրի շարունակական տնտեսական զարգացումը: Արցախում կատարվում են ներդրումներ հիդրոէներգետիկայի և հանքարդյունաբերության ոլորտներում, զարգանում են ենթակառուցվածքներ, իրականացվում են բազմաթիվ սոցիալական ծրագրեր, ստեղծվում են նոր աշխատատեղեր: Աշխարհում Արցախը պետք է ճանաչեն ոչ թե որպես հակամարտության գոտի, այլ որպես բազմադարյան քաղաքակրթության մի մաս հանդիսացող երկիր՝ հնագույն ճարտարապետական կոթողներով ու գեղատեսիլ բնությամբ: Երկիր որն իր մշակույթով, արժեհամակարգով ու ապրելակերպով ժամանակակից աշխարհին համընթաց է ապրում: Երկիր, որը հանդես է գալիս որպես վստահելի և կանխատեսելի գործընկեր իր բոլոր բարեկամների համար: Դրական վարկանիշի ձևավորումը անկասկած կնպաստի Արցախի հանրապետության միջազգային ճանաչմանը, ինչը շարունակում է մնալ մեր արտաքին քաղաքականության գերխնդիրը: Հաշվի առնելով Արցախի անցած պետականաշինության ուղին և առկա ձեռքբերումները, համոզված եմ, որ Արցախի անկախության միջազգային ճանաչումը դարձել է այսօր ժամանակի պահանջ: Միջազգային ճանաչման գործընթացում արդեն իսկ ունենք որոշ դրական տեղաշարժեր, որոնք հնարավոր դարձան սփյուռքի մի շարք կառույցների և անհատների անձնուրաց ու նվիրական աշխատանքի շնորհիվ:

Վերջին տարիներին Արցախի անկախությունը ճանաչող բանաձևեր են ընդունել մի շարք քաղաքներ և վարչական միավորումներ տարբեր աշխարհամասերում: ԱՄՆ՝ Ռոդ Այլենդ, Մասաչուսեթս, Մեն, Լուիզիանա, Կալիֆորնիա, Ջորջիա, և Հավայի

նահանգներն ընդունել են Ղարաբաղի հանրապետության անկախությունը սատարող բանաձևեր: Նմանատիպ բանաձևերով հանդես են եկել նաև Ամերիկայի Լոս Անջելես, Ֆրեզնո, Հոնոլուլու քաղաքները, Ավստրալիայի ամենախոշոր՝ Նոր Հարավային Ուելս քաղաքը նաև Բասկերի երկրի խորհրդարանը: Հաջողություններ են գրանցվել նաև արտասահմանյան տարբեր երկրների և Արցախի համայնքների միջև ապակենտրոնացված համագործակցության հաստատման գործընթացում: Դա հնարավորություն է ստեղծում փոխգործակցություն հաստատել և տարաբնույթ ծրագրեր իրականացնել մշակույթի, կրթության, սպորտի, առևտրի և տեղական ինքնակառավարման ոլորտներում: Մասնավորապես արդեն բարեկամական հարաբերություններ ենք հաստատել Ֆրանսիայի, ԱՄՆ, Բրազիլիայի, Իսպանիայի ու Արցախի մոտ երկու տասնյակ քաղաքների ու համայնքների միջև: Բարձր ենք գնահատում այն, որ այդ բարեկամության հռչակագրերը զուտ փաստաթղթեր չեն, այլ ժողովուրդների միջև անկեղծ համակրանքի ու բարեկամության վրա հիմնված հարաբերությունների տրամաբանական դրսևորում: Նահանգների ու քաղաքների մակարդակով Արցախի անկախության ճանաչումը ու նաև շփումների հաստատումը կարևոր դեր ունի Արցախի հանրապետության համար միջազգային ասպարեզ դուրս գալու և այդ կապերն ընդլայնելու, խորացնելու ու ամրապնդելու տեսանկյունից, իսկ դա չի կարող չբարձրացնել Արցախի միջազգային հեղինակությունը, չնպաստել նրա տնտեսական, սոցիալ-մշակութային, գիտակրթական զարգացմանը: Այս ամենը հիմք է հանդիսանում արցախյան անկախ պետականության ամրապնդման ու կայացման համար: Այդ գործընթացը շարունակական է լինելու և հասնելու է իր տրամաբանական ավարտին:

Միբելի հայրենակիցներ,

Մեկ էլույթի շրջանակներում իհարկե հնարավոր չէ անդրադառնալ բոլոր առկա մարտահրավերներին և խնդիրներին, որոնք բազմաթիվ են և տարաբնույթ: Այսօր մեկնարկած Հայաստան-Սփյուռք հերթական համահայկական վեցերորդ համաժողովը, որն աշխարհասփյուռ հայության բոլոր հատվածները ներկայացնող յուրատեսակ հարթակ է մեզ՝ մասնակիցներիս հնարավորություն է ընձեռում ոչ միայն վերհանել և քննարկել առկա հիմնախնդիրներն ու մարտահրավերները, այլև նախանշել դրանց հաղթահարման ուղիներն ու ձևերը՝ օգտագործելով Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության ողջ ներուժը:

Համոզված եմ, որ ի հեճուկս բոլոր դժվարությունների և երբեմն սահմանափակ թվացող հնարավորությունների, համատեղ ուժերով և համակարգված աշխատանքով մենք հաղթահարելու ենք բոլոր դժվարությունները և բոլոր մարտահրավերները՝ վերածելով դրանք հնարավորությունների:

Մաղթում եմ մեզ բոլորիս բեղմնավոր աշխատանք՝ ի շահ համազգային նպատակների և իդեերի իրականացման:

Շնորհակալություն

**Կարեն Միրզոյան**

Արցախի Հանրապետության արտքին գործերի նախարար